ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2006 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները……

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները……. 4

2 2006թ. կատարված հիմնական աշխատանքները……

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում……..…… 4

2.2. Առևտրի ոլորտ…… 6

2.3. Ներդրումային ոլորտ……. 7

2.4. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության ոլորտ. 9

2.5. Գիտական, ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման ոլորտ.....…….. 10

2.6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ……. 10

2.7. Արդյունաբերական ոլորտ……. 12

2.8. Ռազմարդյունաբերական համալիրի և ռազմատնտեսական ծրագրերի ոլորտ .....…….. 15

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցության ոլորտ……... 16

2.10. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն…….. 17

2.11. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ…….. 18

2.12. Զբոսաշրջության ոլորտ……... 19

2.13. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ…… 21

2.14. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտ…….…….…..... 24

2.15. Որակի վերահսկողություն…….. 26

2.16. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն…….....……. 27

2.17. Ընդերքօգտագործման ոլորտ..... 28

Հավելված 1. Նախարարության համակարգի 2006թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին..... 29

Հավելված 2. Նախարարության փաստաթղթաշրջանառությունը……..…… 30

Հավելված 3. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2007 թվականի միջոցառումների ցանկ……..... 31

1. Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները

2006թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության գործունեության համար հիմք են հանդիսացել ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները, ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը և դրա իրագործումն ապահովող միջոցառումները:

Նախարարության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել.

- տնտեսության հեռանկարային զարգացման հիմքերի և մրցակցային առավելությունների հետևողական ձևավորման ապահովմանը, համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացմանը, երկրի տնտեսական վարկանիշի բարձրացմանը,
- ներդրումային ակտիվության խթանմանը, ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավման ապահովմանը,
- ինովացիոն գործունեության օրենսդրական հենքի ապահովմանը, համապատասխան ենթակառուցվածքի զարգացմանը, ազգային ինովացիոն համակարգի կայացմանը,
- տեխնոլոգիական արդիականացման գործընթացներին նպաստմանը, ներմուծման կառուցվածքում արտադրական նշանակության ապրանքների գերակշռության ապահովմանը, արտահանման կառուցվածքում գիտատար արտադրանքի մասնաբաժնի ավելացման խրախուսմանը,
- մտավոր սեփականության, հեղինակային և հարակից իրավունքների պահպանության բնագավառի շարունակական ներդաշնակեցմանը միջազգային չափանիշներին, պահպանության իրականացման մեթոդների և տեխնոլոգիաների հետևողական արդիականացմանը,
- ՓՄՁ պետական աջակցության ձևերի և մեթոդների կատարելագործմանը, աջակցության արդյունավետության և հասցեականության բարձրացմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ենթակառուցվածքի զարգացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը,
- զբոսաշրջության համաշխարհային շուկայում Հայաստանի պատշաճ ներկայացվածության ապահովմանը, զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրերի իրականացմանը,
- տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության ժամանակակից համակարգի կայացմանը և արդյունավետ կիրառմանը,
- արտադրանքի և ծառայությունների՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության ապահովմանը:

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները

2006թ. իրականացված քաղաքականության արդյունքում.

- Արձանագրվել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 13.4% աճ:
- Համաձայն տնտեսության ազատականության միջազգային վարկանիշային գնահատականի՝ 161 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 32-րդ տեղը:
- Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարություն 2007» (§Doing Business 2007¦) զեկույցի համաձայն Հայաստանը զբաղեցրել է 34-րդ տեղը:
- Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության կողմից (OECD) վերանայվեց ՀՀ տրված ռիսկայնության գործակիցը՝ տեղափոխվելով ռիսկայնության 7-րդ խմբից 6-րդ՝ «Արտահանման պաշտոնապես սատարվող վարկերի տրամադրման կարգին» համապատասխան:
- Օտարերկրյա ներդրումների ծավալը սպասվում է ավելի քան 400 մլն դոլար: 2005թ. 9 ամիսների համեմատությամբ 2006թ. նույն ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների ծավալն աճել է 31.8%-ով:
- Արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 3198.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 115.2%: Ընդ որում՝ արտահանման ծավալը կազմել է 1004.0 մլն դոլար, աճի տեմպը՝ 103.1 %, ներմուծումը՝ 2194.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 121.8%:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 2 %:
- ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ-ում կազմել է ավելի քան 40%, ՓՄՁ զարգացման ինդեքսը[1] կազմել է 237.2՝ 2005թ. 171.9 դիմաց:
- Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը գնահատվում է 380 հազարից ավելի:

2. 2006թ. կատարված հիմնական աշխատանքները

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում

<u>Օրենսդրական ոլորտ</u>

ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նախարարության կողմից մշակված՝

- «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և

[1] Ինդեքսը կիրառվում է ՄԱԿ-ի կողմից իրականացվող հետազոտություններում: Այն ընդհանրական տնտեսական ցուցանիշ է՝ հիմնված հետևյալ 3 հիմնական գործոնների վրա. մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում, ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթով:

ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթով:

Մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել՝

- ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը)՝ ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթով,
- ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ կառավարության 2006թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով նախարարությանը վերապահված միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

2006թ. ընթացքում մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել վերը նշված օրենքների կիրարկման ապահովմանն ուղղված որոշումների և այլ իրավական ակտերի նախագծեր: Մասնավորապես ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ կառավարության որոշման 84 և ՀՀ վարչապետի որոշման 15 նախագծեր:

<u>Ծրագրերի մշակում</u>

Երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունն ամրագրելու նպատակով 2006թ. նախարարությունը մշակել և ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել հետևյալ ծրագրային փաստաթղթերը՝

- «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիրը»,
- ՀՀ-ում արհեստագործության զարգացման հայեցակարգը,
- ՓՄՁ պետական աջակցության 2007 թվականի ծրագիրը,

Իրականացվել են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության գործունեության հիմնական ուղղությունների մշակման աշխատանքները: Շարունակվել է ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարության լրամշակման գործընթացը, որը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի ՀՀ ազգային անտանգության ռազմավարության ընդունումից հետո:

ՀՀ տարեկան բյուջեի կազմման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով նախարարությունն իր իրավասության սահմաններում նախապատրաստել է 2007թ. ՀՀ պետական բյուջեի ուղերձի նախագծում ընդգրկված «ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները» հատվածը և 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծի վերաբերյալ առաջարկությունները:

Տնտեսական զարգացման ծրագրերի և տնտեսական քաղաքականության մշակման ու ճշգրտման տեղեկատվական ապահովման նպատակով իրականացվել է ոլորտներում գործող 197 ընկերությունների գործունեության հիմնական արտադրական ցուցանիշների ամսական վարչական մոնիտորինգ, կատարվել են տնտեսության առանձին ոլորտների զարգացման միտումների ուսումնասիրություններ, ներկայացվել են առաջարկություններ ՀՀ նախարարություններ և այլ գերատեսչություններ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողներից 111-ը 2006թ. անցել են մասնագիտական վերապատրաստում: Ատեստավորվել են 57 քաղաքացիական ծառայողներ: Հայտարարվել է քաղաքացիական ծառայության պաշտոնների 48 մրցույթ:

2.2. Առևտրի ոլորտ

<u>Սպառողական շուկա ծառայություններ:</u> ՀՀ ներքին շուկայում 2006թ. մանրածախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը կազմել է 1295.5 մլրդ դրամ, աճի տեմպը 114.1%, որից մանրածախ առևտրի շրջանառության ծավալը կազմել է 820.8 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 110.5 %:

ՀՀ ԱԺ է ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ համապատասխան փաթեթով, որով հստակեցվել են առևտրի ձևերը, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվել տնտեսվարող սուբյեկտների համար, ինչպես նաև սահմանվել են ՏԻՄ-երի կողմից իրականացվող հսկողության մեխանիզմները:

Սպառողի շահերի պաշտպանության նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նորմատիվ փաստաթղթեր՝ ուղղված սննդամթերքի պարտադիր հայերեն մակնշման ապահովմանը, որոնք ուժի մեջ են դրվել 2007թ. հունվարի 1-ից:

<u>Արտաքին առևտուր:</u> Արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 3198.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 115.2%: Ընդ որում՝ արտահանման ծավալը կազմել է 1004.0 մլն դոլար, աճի տեմպը՝ 103.1 %, ներմուծումը՝ 2194.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 121.8%: Առանց ադամանդե քարի արտահանումը կազմել է 758.4 մլն դոլար՝ աճի տեմպը՝ 106.7%, ներմուծումը՝ 1971.0 մլն դոլար՝ աճի տեմպը՝ 128.7%: Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 1190.3 մլն դոլար:

ՌԴ-ում ՀՀ տարվա շրջանակներում կազմակերպվել է հայկական ապրանքների մշտական գործող ցուցահանդես, որտեղ ներկայացվել են գիտությունը և կրթությունը, տարբեր ոլորտների 50-ից ավելի ընկերություններ: Նույն ընկերությունները մասնակցել են նաև ԱՊՀ 15-ամյակին նվիրված ցուցահանդեսին:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ շարունակվել են բանակցություններ առավել ազատական առևտրի ռեժիմ սահմանելու նպատակով:

2.3. Ներդրումային ոլորտ

Իրականացվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված էր ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացմանը, Հայաստանում բիզնես պայմանները պոտենցիալ ներդրողներին ներկայացնելու և տնտեսության վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու նպատակով գործարար համաժողովների կազմակերպմանը, ՀՀ համար բարենպաստ ներդրումային վարկանիշի ձևավորմանը:

Իրականացված ներդրումային քաղաքականության արդյունքում 2006թ. 9 ամիսների ընթացքում, իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 297,4 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 149,0 մլն դոլար: 2005թ. 9 ամիսների համեմատ օտարերկրյա ընդամենը ներդրումների ծավալն աճել է 31.8%-ով, իսկ ուղղակի ներդրումների ծավալը՝ 8.0%-ով: Տարվա կտրվածքով սպասվող օտարերկրյա ներդրումների ծավալը կկազմի ավելի քան 400 մլն ԱՄՆ դոլար:

Խոշոր օտարերկրյա ներդրումներ են իրականացվել օդային տրանսպորտի («Արմենիա միջազգային օդանավակայաններ»), կապի («Վիվա-Սելլ», «Արմենթել»), հանքագործական և մետաղագործական արդյունաբերության («Արմենալ», «Զանգեզուրի ՊՄԿ»), տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի («Սինոփսիս», «Իփիջի Լեբզ», «Վիասֆեր տեխնոպարկ», «Յունիքոմփ)» և այլ ոլորտներում: Իրականացված ներդրումները հիմնականում ուղղվել են արդիականացման և արտադրական հզորությունների ընդլայնմանը:

2006թ. աշխատանքներ են տարվել ներդրումային զգալի ներուժ ունեցող, ՀՀ հիմնական գործընկեր երկրների հետ երկկողմ իրավապայմանագրային դաշտի ձևավորման ուղղությամբ և շարունակվել են բանակցություններն իրավապայմանագրային դաշտի կարևորագույն մասը կազմող՝ «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջկառավարական Համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: Արդյունքում, համաձայնագրեր են ստորագրվել Շվեդիայի Թագավորության, Լիտվայի Հանրապետության Կառավարության, Ղազախստանի Հանրապետության Կառավարության հետ: Վավերացվել է Նիդեռլանդների Թագավորության հետ Համաձայնագիրը: Մինչ օրս ստորագրված Համաձայնագրերի թիվը կազմել է 37, բանակցային գործընթացի մեջ են 24-ը: Ստորագրման են նախապատրաստված 3-ը (Բոսնիա և Հերցեգովինա, Իսլանդիա և Կորեա):

«Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» հետազոտության արդյունքում կազմված «Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի» նախագիծը ներկայացվել է Գործարարության Աջակցման Խորհուրդ: Ծրագրի իրականացման ֆինանսավորման վերաբերյալ նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել միջազգային ֆինանսա-տնտեսական կազմակերպությունների հետ:

Սերտ համագործակցություն է իրականացվել ներդրողներին և ներդրումներին օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող մասնագիտացված միջազգային և հայաստանյան կառույցների հետ, մասնավորապես ԶՀԳ, ՀՀ ԱԱՊ, ՀԳԱՄ և այլ կազմակերպությունների հետ:

Նպատակաուղղված աշխատանքներ են իրականացվել ՀՀ շնորհվող վարկանիշերի բարելավման և վարկանիշային գնահատականների հրատարակություններում համապատասխան ճշգրտումներ իրականացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ «Համաշխարհային մրցունակության ինդեքս», «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների մրցունակության ինդեքս»: ՀՀ բավականին դրական անկախ ներդրումային վարկանիշներ է ստացել համաշխարհային հեղինակություն ունեցող «Մուդիս ինվեստոր սերվիս» (Ba2 վարկանիշ) և «Ֆիթչ» (BB- վարկանիշ) վարկանիշավորող գործակալությունների կողմից:

Շարունակվել են ՀՀ տրված ռիսկայնության գործակցի հետագա բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մասնավորպես՝ Նախարարությունը, ԵՄ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչը և OECD անդամ երկրներում ՀՀ դեսպանները մշտական աշխատանքային կապ են պահպանել OECD քարտուղարության հետ, ՀՀ ֆինանսատնտեսական իրավիճակի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն են ներկայացրել դասակարգումն իրականացնող փորձագետների խմբին, քննարկումներ են անցկացրել դասակարգման ժամանակ քվեարկության ձայնի իրավունք ունեցող OECD անդամ երկրների վարկային գործակալությունների հետ և այլն:

2006թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ անկախության 15-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում կայացավ Հայաստան-Սփյուռք երկրորդ տնտեսական համաժողովը, որին մասնակցեցին մոտ 800 մասնակիցներ և հյուրեր, իսկ սեպտեմբերի 22-ից 24-ը համաժողովի շրջանակներում անցկացվեց "Pan-Armenian EXPO-2006" երկրորդ ունիվերսալ ցուցահանդեսը, որին մասնակցեցին 250 օտարերկրյա և տեղական ընկերություններ:

Կազմակերպվել են նաև մի շարք երկկողմ գործարար համաժողովներ. հայ-ֆրանսիական, հայ-իրանական, հայ-ռուսական, հայ-գերմանական և այլն:

2.4. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության ոլորտ

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետությունը և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը բարձրացնելու, ոլորտում միջազգային փորձի գործնական կիրառման նպատակով՝ օրինագիծը լրացնում և ճշգրտումներ է մտցնում առանձին հասկացությունների սահմանման, տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող երևույթների որակման, շուկայում գործող տնտեսվարողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան վարքագծային դրսևորման, ոլորտում վերահսկողության և պատասխանատվության կիրառման հարաբերությունների իրավական կարգավորման գործում:

2.5. Գիտական, ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման ոլորտ

2006թ. ընդունված «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Ինովացիոն բնագավառում լիազոր մարմին ճանաչելու մասին» և «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» որոշումները: Մշակման ընթացքում են օրենքից բխող «Ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» և «Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված 21.5 մլն դրամ գումարով սկսվել է «ՀՀ-ում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թթ. ծրագրի» միջոցառումների ցանկի՝ 2006թ. համար նախատեսված հետևյալ միջոցառումների իրականացումը՝ «Առաջավոր տեխնոլոգիաների գիտաինովացիոն կենտրոնի ստեղծում» և «Ինովացիոն ենթակառուցվածքների միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում» «Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, «Ինովացիոն փաթեթների մշտապես գործող ցուցահանդեսի կազմակերպում» և «Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ստեղծում» «Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն» ՊՈԱԿ-ում: Ավարտվել են ենթակառույցների և տվյալների բազայի ստեղծման առաջին փուլի աշխատանքները:

Նախարարության գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ծավալն աճել է միջինում 23,6 %-ով: Նախարարության 7 գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից 2006թ.-ին պետբյուջեից բազային ֆինանսավորման գծով իրականացվել է 12 գիտական նախագիծ՝ 280.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում համատեղ կազմակերպվել է կլոր սեղան՝ «Ինովացիոն գործունեությունը Հայաստանում. իրականություն և հեռանկարներ» թեմայով: Ակնկալվում է այս կազմակերպության աջակցությունը «ՀՀ-ում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թթ. ծրագրի» մի շարք միջոցառումների իրականացման համար միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությունը ստանալու հարցում:

2.6. Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտ

Ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 165 ձեռնարկություններ, աշխատատեղերի քանակը աճել է մինչև 5000, արտադրության ծավալը գնահատվում է շուրջ 80 մլն դոլար,

որից արտահանվում է մոտ 85%-ը, ՀՆԱ-ում SS ոլորտի բաժինը կազմում է մոտ 2%, օտարերկրյա ներդրումների ծավալը գնահատվում է առնվազն 10 մլն դոլար, արտադրության ծավալն աճել է շուրջ 30 %-ով:

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվելու է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման գործընթացը: Շրջանառության մեջ դրված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագծով առաջարկվում է նվազեցնել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման համար պետական տուրքի սահմանված դրույքաչափերը:

SS ոլորտում նկատվում է ծրագրային արտադրանքից (Software) դեպի մեքենայական մասի (Hardware) արտադրության անցում կատարելու միտում:

«Յունիքոմփ» ընկերությունը արտադրում է INTEL CENTRINO տեխնոլոգիայի հիման վրա հիմնված նոութբուքեր և INTEL Itanium 2 բազայի հիման վրա հիմնված սերվերներ: Սկսվել է WiFi տեխնոլոգիաների կիրառումը և WiMax տեխնոլոգիաների գործարկումը: Ավարտին են մոտենում GPS (Global Positioning System) արբանյակային նավիգացիոն համակարգի գործարկման աշխատանքները: Արդեն մշակված են Երևան քաղաքի և ՀՀ էլեկտրոնային քարտեզները:

Ոլորտի հնարավորությունները ներկայացվել են CeBIT-2006 (Գերմանիա), GITEX-2006 (Դուբայ) ՏՀՏ ցուցահանդեսներում:

ՀՀ վարչապետի հովանու ներքո սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում Երևանում անց են կացվել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով հետևյալ միջոցառումները՝ «Ինովացիոն Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ-2006» թեմայով միջազգային կոնֆերանս, «ՏՀՏ զարգացման հնարավորությունները զարգացող երկրապարփակ երկրներում» թեմայով Միջազգային Համաժողով, Միջազգային Էլ-բովանդակության համաշխարհային գագաթաժողով, «Էլեկտրոնային բովանդակության մրցույթի» հաղթողների մրցանակաբաշխություն, «Դիջիթեք-2006» տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ցուցահանդես, «Մարդու իրավունքները տեղեկատվական հասարակությունում. Աջակցություն երեխաներին և երիտասարդներին» համաեվրոպական համաժողով, «Միկրոէլեկտրոնիկա-2006» առաջին հայաստանյան օլիմպիադա:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել համաշխարհային ճանաչում ունեցող "SUN Microsystems" ընկերության հետ, որով նախատեսվում է ՀՀ-ում հիմնել SUN Microsystems RFID, Java տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն, ինտեգրման ու

թեսթավորման լաբորատորիա: ՀՀ կառավարության և "Hewlett-Packard" ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ "Hewlett-Packard" ընկերության կողմից ՀՀ-ում խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերություն հիմնելու մասին:

Սեպտեմբերի 19-23-ը տեղի ունեցած «Հայ-եգիպտական գործարար SS ֆորումի», ընթացքում ստորագրվել է հայ-եգիպտական համագործակցության հուշագիր՝ համատեղ գործարար ծրագրերի իրականացման վերաբերյալ:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի, Հայաստանի գործարարների միության, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի և գերմանական «Ֆեստո Դիդակտիկ» ընկերության միջև կնքվել է ուսումնական կենտրոն ստեղծելու համաձայնագիր:

"Alcatel" ընկերությունը հայտնել է Հայաստանում ծրագրային ապահովման կենտրոն հիմնելու մտադրության մասին և հայկական "Luxoft" ընկերության հետ համաձայնագիր է ստորագրել ծրագրային ապահովման համատեղ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

«Սինոփսիս Հայաստան» ընկերությունը Մոսկվայի Էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտի հետ ստորագրել է Համագործակցության համաձայնագիր, որը կապահովի Ռուսաստանում «Սինոփսիսի» գործիքային միջոցների և «Սինոփսիս Արմենիայի» կողմից մշակված դասընթացների վրա հիմնված բարձրակարգ կրթություն միկրոէլեկտրոնիկայի բնագավառում:

2.7. Արդյունաբերական ոլորտ

ՀՀ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 643.5 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 99.1%, իսկ առանց ադամանդի արտադրության 640.7 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 102.3%:

2006թ. արդյունաբերական համալիրի զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է եղել աջակցել ոլորտի հետագա զարգացմանն ու կայունացմանը: Դրամի արժեվորման պարագայում հրատապ են դարձել արտահանմանն ուղղված բնագավառների արտադրատեսակների մրցունակության բարձրացումը, ինչը հնարավոր է ապահովել գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների լայնածավալ կիրառմամբ, նոր տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործմամբ:

<u>Մեքենաշինական արդյունաբերություն:</u> ՀՀ մեքենաշինական բնագավառի մոնիտորինգի ենթարկված 68 ընկերություններից աշխատել են 44-ը, որոնք 2006թ. թողարկել են 4.8 մլրդ դրամի արտադրանք, աճի տեմպը՝ 104,3%, իրացվել է 5.13 մլրդ դրամի արտադրանք: Առկա են ձեռքբերումներ հաստոցագործիքաշինական և սարքաշինական

բնագավառներում, որոնց աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 112% և 123.7%, իրացումը՝ համապատասխանաբար 115.9% և 129.3%: Ճյուղի կայուն գործունեությունն ապահովում են Չարենցավանի «Արմավտո»՝ 135%, «Կապանի մեքենաշինական գործարան»՝ 113.4%, Արթիկի «Ապակեմեքենա»՝ 148%, Գյումրիի «Քարմշակմեքենա»՝ 112%, Երևանի «Էլսարք»՝ 103%, Գորիսի «Գամմա»՝ 107% Երևանի «Ինտերստանոկ»՝ 103.4% ընկերությունները:

Ճյուղի գործունեության կայունացման միտման հետ զուգահեռ, 2005թ. նկատմամբ, գրանցվել է արտահանման ծավալների անկում՝ կազմելով 91.1%, մասնավորապես. «Արմավիրի հաստոցների գործարան» ԲԲԸ՝ 23%, «Ալմաստ» ՓԲԸ՝ 77%, «Անալիտսարք» ՓԲԸ՝ 15%: Արտահանման ծավալների անկումը պայմանավորված է հիմնականում դրամի արժեվորմամբ:

Քիմիական արդյունաբերություն: Ճյուղում մոնիտորինգի ենթարկված 22 ընկերություններից աշխատել են 16-ը: 2006թ. թողարկվել է 11.9 մլրդ դրամի արտադրանք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14.7 մլրդ դրամի դիմաց: Արտադրական ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է խոշոր՝ «Նաիրիտ Գործարան» և «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲԸ-ների ոչ ռիթմիկ աշխատանքով: Չնայած դրան, ոլորտի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 15.8 մլրդ դրամ, նախորդ տարվա 8 մլրդ դրամի դիմաց /աճի տեմպը՝197%/, այդ թվում՝ արտահանումը կազմել է 11.2 մլրդ դրամ /աճի տեմպը՝ 290%/: Ոլորտում արտադրական ծավալների աճ են գրանցել կենցաղային քիմիայի և դեղանյութերի արտադրության ենթաճյուղերի այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Շեն Կոնցեռն» ՍՊԸ՝ 148%, «Քրաուն քեմիքալ» ՍՊԸ՝ 108,4 %, «Լիկվոր» ՍՊԸ՝ 138%:

Թեթև արդյունաբերություն: Ճյուղում մոնիտորինգի ենթարկված 32 ձեռնարկություններից 2006թ. աշխատել են 27-ը՝ նախորդ տարվա նկատմամբ 8-ով ավելի՝ թողարկելով 9.54 մլրդ դրամի արտադրանք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9.8 մլրդ դրամի դիմաց: Իրացման ծավալը կազմել է 9.2 մլրդ դրամ, նախորդ տարվա 9.7 մլրդ դրամի դիմաց, արտահանումը՝ 7.3 մլրդ դրամ, նախորդ տարվա 7.2 մլրդ դրամի դիմաց:

Ճյուղի արդյունքները կարող էին ավելի նշանակալից լինել, եթե հետևյալ ընկերությունները նախորդ տարվա համեմատ չունենային արտադրական ծավալների նման անկում /«Հ. Էդ. Հայաս Գրուպ» ԲԲԸ՝ 52.6%, Վանաձորի «Բազում Ֆիրմա» Ա.Կ.՝ 17,4%, Վանաձորի «Արձագանք» ՍՊԸ՝ 51%, «Սամկոն» ՓԲԸ՝ 19%, «Անուշ» ՍՊԸ՝ 51%/: Ճյուղում համախառն արտադրանքի ծավալների անկման հիմնական պատճառներից են սպառման արտաքին շուկաների կորուստը, ինչը հետևանք է գործող պայմանագրերի ժամկետներում դրամի արժեվորման:

2005թ. համեմատությամբ արտադրանքի ծավալները զգալիորեն ավելացրել են հետևյալ ընկերությունները. Գյումրիի «Գևորգ և Վահան» ՍՊԸ՝ 141%, «Գարուն» ԲԲԸ՝ 137%, «Բ.Դարբինյան» ՍՊԸ՝ 147%, «Արագած» ԲԲԸ՝ 181%, «Էն. Վայ. Էյ. Դի.» ՍՊԸ՝ 216%, Իջևանի «Ջրաշող» ՓԲԸ՝ 141%:

Փայտամշակման արդյունաբերություն: Մոնիտորինգի ենթարկված 9 ընկերություններից աշխատել են 7-ը: 2006թ. ապրանքային արտադրանքի ծավալը փայտամշակման բնագավառում կազմել է 0.93 մլրդ դրամ /աճի տեմպը՝ 193.6%/, իրացումը՝ 0.83 մլրդ դրամ /աճի տեմպը՝ 187%/: Ընկերությունները հիմնականում գործում են ներքին շուկայի պահանջարկի ապահովման ուղղությամբ: Բնագավառի գործունեության կտրուկ աճը պայմանավորված է շուկայական հարաբերությունների պայմաններում ճկուն կառավարմամբ, ներքին շուկայի կոնյուկտուրայի ճիշտ գնահատմամբ, ինչի շնորհիվ կտրուկ բարձրացել է տեղական ապրանքների մրցունակությունը ներքին շուկայում: Արտադրանքի ծավալների կտրուկ աճ է գրանցվել հետևյալ ընկերություններում՝ «Զեյթունի կահույքի» ԲԲԸ՝ 21 անգամ, «ՎԱԲԱ» ՍՊԸ՝ 3,6 անգամ, Մասիսի «Գոֆրոտարա» ԲԲԸ՝ 170%:

Ակնագործություն և ոսկեգործություն: 2006թ. թողարկվել է 88.0 մլրդ դրամի արտադրանք, իրացվել է 89.0 մլրդ դրամի, արտահանվել՝ 87.1 մլրդ դրամի արտադրանք: Ճյուղում զբաղված են մոտ 2500 մարդ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 58 հազար դրամ: Արտադրական ցուցանիշները 2005թ. նկատմամբ նվազել են 20%-ով: Անկման հիմնական պատճառներն են համաշխարհային շուկայում ճյուղի արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազումը, դրամի շարունակաբար արժեվորումը (ինչն աշխատուժի արժեքի տեսակետից հանգեցնում է մրցակցային հնարավորությունների նվազմանը), Ռուսաստանից միջկառավարական Համաձայնագրի շրջանակներում ալմաստի հումքի մատակարարումների բացակայությունը, ստեղծված մրցակցային փոփոխություններին անպատրաստ լինելը և այլն: Անկման պատճառները վերացնելու նպատակով ձեռնարկվել են միջոցառումներ, որոնք հնարավորություն կընձեռեն 2007թ. սկսած ինտեգրվել համաշխարհային գործընթացներին և համապատասխան դաշտ ստեղծել նոր ներդրողների ներգրավման ուղղությամբ: Այդ նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել «ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ ակնագործության և ոսկեգործության զարգացման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման և «Լիցենզավորման օրենքի մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը: Աշխատանքներ են տարվել «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի ընդունումից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտերի մշակման ուղղությամբ:

Շարունակվեց ակտիվ մասնակցությունը «Քիմբերլի Գործընթացի» հավաստագրման ծրագրի աշխատանքներին, հատկապես՝ ՀՀ հետանդամակցային պարտավորությունների կատարման ուղղությամբ: Որպես Քիմբերլի գործընթացի մասնակից պետություն Գաբորոնում կայացած «Քիմբերլի Գործընթացի» տարեկան պլենար նիստին ներկայացվեց և դրական գնահատականի արժանացավ ՀՀ 2005թ. «Քիմբերլի Գործընթացի Հավաստագրման Ծրագրի» տարեկան հաշվետվությունը:

<u>Հանքարդյունաբերության և վերամշակման ոլորտում:</u> 2006թ. ընթացքում հանքարդյունաբերության և վերամշակման ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից թողարկվել է 235.5 մլրդ դրամի ապրանքային արտադրանք՝ նախորդ տարվա 223.5 մլրդ դրամի դիմաց: Թողարկվող ապրանքային արտադրանքի ծավալը, նախորդ տարվա համեմատությամբ, ընդհանուր առմամբ ավելացել է 105.4 %-ով, արտահանումը՝ 4.3 %-ով, արտադրանքի իրացումը համապատասխանաբար կազմել է 239.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 243.2 մլրդ դրամի դիմաց՝ (աճի տեմպը՝ 98.4 %), որը բացատրվում է 2006թ. միջազգային շուկայում մոլիբդենի գնի մասնակի անկումով: Ճյուղում փաստացի աշխատողների թիվը կազմել է 11466 մարդ՝ 80 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտադրական ծավալների ցուցանիշների բարելավման տեսակետից առանձնանում են. «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն 7.4 % աճով, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ն 27.5 % աճով, «AMP» ՍՊԸ-ն 30.4 % աճով, «Արարատցեմենտ» ԲԲԸ-ն 5.3% աճով, «Միկա ցեմենտ» ՍՊԸ-ն 2.1 % աճով:

Իրականցվել են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի հետ կոնցեսիոն պայմանագրի կնքման նախապատրաստական աշխատանքները: «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետերերի հետ բանակցությունների արդյունքում մշակվել և կնքվել է «Իրագործման պայմանագիրը»:

2.8. Ռազմարդյունաբերական համալիրի և ռազմատնտեսական ծրագրերի ոլորտ

Ռազմաարդյունաբերական համալիրի մոնիտորինգի ենթարկվող ընկերությունների 2006 թ. ապրանքային արտադրանքի ծավալը աճել է 3.9 %-ով և կազմել 435.1 մլն դրամ: 2005թ. համեմատ աճել են նաև արտահանման ծավալները և կազմել 129 %:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի հայկական մասն անցկացրել է հինգ նիստ: Հայկական մասի պատվիրակությունը Մոսկվայում և Բիշքեկում մասնակցել է ՀԱՊԿ ՌՀՄՀ առաջին և երկրորդ նիստերին, որտեղ հաստատվել են ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության 2006 և 2007 թթ. աշխատանքային ծրագրերը: Շարունակվում են աշխատանքները՝ «Գույք պարտքի դիմաց» Համաձայնագրով ՌԴ որպես սեփականություն հանձնված ձեռնարկությունների

գործունեության ապահովման հետ կապված հարցերի կարգավորման Ենթահանձնաժողովի ծրագրի շրջանակներում:

ՀՀ կառավարություն կողմից հաստատվել է քաղաքացիական և ծառայողական զենքի և դրանց փամփուշտների փորձագիտական գործընթացի կազմակերպման միջնաժամկետ ծրագիրը: Ընթանում են լաբորատորիայի ստեղծման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա սերտիֆիկացնել քաղաքացիական և ծառայողական զենքը և անցկացնել զենքի արտադրության /նորոգման/ փորձագիտություն և համապատասխան լիցենզիայի տրամադրում:

Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերաբերյալ համապատասխան հանձնաժողովին է ներկայացվել 89 կարծիք:

ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել Զորահավաքային նախապատրաստության 2007թ. տարեկան ծրագիրը:

Նախարարությունում անց են կացվել շտաբային և հրամանատարաշտաբային ուսումնավարժություններ:

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցություն ոլորտ

2006թ. աշխատանքներն ուղղվել են համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման խորացմանը, արտահանման խթանմանը՝ ԶՀԳ, ՀՀ ԱԱՊ, ՀԱԳՄ հետ համագործակցության միջոցով, փոխադարձ տնտեսական համագործակցության զարգացմանը և խորացմանը՝ բազմակողմ և երկկողմ համագործակցության ընդլայնման միջոցով: Աշխատանքներ են ծավալվել առևտրատնտեսական, գիտատեխնիկական, զբոսաշրջային և այլ ոլորտներում համապատասխան իրավապայմանագրային դաշտի զարգացման ու ընդլայնման, այս ոլորտներում ստորագրվող համաձայնագրերով սահմանված դրույթների կատարման, առևտրատնտեսական հարաբերությունների հիմնական սկզբունքների մշակման ու իրագործման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել հայ-հունական, հայ-բուլղարական, հայ-ռումինական, հայ-վրացական, հայ-բելառուսական, հայ-ուկրաինական, հայ-եգիպտական, հայ-իրանական, հայ-հնդկական, հայ-սիրիական և հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովների նիստերի արդյունքում ստորագրված արձանագրություններով ամրագրված պարտավորությունների և ձեռքբերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարության պաշտոնական պատվիրակության 2006թ. նոյեմբերի 9-ից 13-ը Երևան

կատարած այցի ծրագրով նախատեսված միջոցառումների և հանդիպումների իրականացման ու պատշաճ կազմակերպման ուղղությամբ:

Շարունակվել են 2007թ. անցկացվելիք հայ-բրազիլական և հայ-ֆիննական գործարար համաժողովների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Քննարկվել է ՍԾՏՀ կազմակերպության Առևտրի և տնտեսական զարգացման աշխատանքային խմբի համադրող երկիր՝ Թուրքիայի կողմից ներկայացված Գործողությունների ծրագրի նախագիծը:

Քննարկվել են ԱՊՀ շրջանակներում ստորագրման նախապատրաստվող 8 Համաձայնագրերի նախագծեր:

Սահմանված կարգով աշխատանքներ են տարվել 6 միջազգային պայմանագրերի նախագծերի ներպետական համաձայնեցման և ստորագրման նախապատրաստման, ինչպես նաև 1 միջազգային Համաձայնագրի վավերացման ապահովման ուղղությամբ:

2.10. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն

<u>ԱՀԿ-ի հետ համագործակցություն</u>*:* ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի միջոցով հետևողական մասնակցություն է ցուցաբերվել «Դոհայի զարգացման օրակարգ» նախաձեռնության շրջանակներում ընթացող առևտրի ազատականացման բանակցություններին, ձևավորված բանակցային խմբերի աշխատանքներին (դեպի ծով ելք չունեցող երկրներ, ԱՀԿ նոր անդամակցած երկրներ և այլն), համապատասխան փաստաթղթերի մշակմանն ու դրանցում ՀՀ շահերից բխող առաջարկների ներառմանը:

ԱՀԿ-ին Ուկրաինայի անդամակցության բանակցությունների շրջանակներում ավարտվել են ապրանքների շուկաների մատչելիության և ծառայությունների առևտրի ոլորտի ազգային մոտեցման և շուկաների մատչելիության երկկողմ բանակցությունները և ստորագրվել է երկկողմ բանակցությունների ավարտի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ:

<u>ԱՀԿ ծանուցման պարտավորությունների կատարում</u>: Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարվել է նախատեսված բոլոր հերթական և ըստ անհրաժեշտության ծանուցումները: ԱՀԿ Քարտուղարությանն են տրամադրվել 11 ծանուցումներ: ՀՀ պարտավորությունների ներքո նախապատրաստվել և իրականացվել են «Էներգետիկ խարտիայի» համաձայնագրի շրջանակներում անհրաժեշտ ծանուցումները:

Շարունակվել է ԱՀԿ Քարտուղարությունից ստացված նյութերի, ԱՀԿ անդամ երկրներից ստացված ծանուցումների համակարգման, ուսումնասիրման և խմբավորման, ինչպես նաև ԱՀԿ ծանուցման գործակալության ինտերնետային կայքի պահպանման և բարելավման աշխատանքները:

ԵՄ-ի հետ համագործակցություն: 2006թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում հաստատվել է Եվրոպական Հարևանության Քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ համատեղ գործողությունների ծրագիրը, որի պատշաճ իրականացման համար շահագրգիռ ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների հետ մշակվում են կոնկրետ ծրագրեր: Ներկայումս աշխատանքային կարգով նախարարություն են ներկայացվել 182 ծրագիր:

ԵՄ-ի կողմից ՀՀ-ին Շուկայական տնտեսությամբ երկիր կարգավիճակը շնորհելու գործընթացը ներկայումս գտնվում է վերջնական փուլում:

ԳՀՀ դրույթների իրականացման նպատակով ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ Ազգային ծրագիրը:

Աշխատանքներ են տարվել Եվրամիության կողմից ՀՀ-ին «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգ» (GSP+) առևտրային ռեժիմ տրամադրելու ուղղությամբ, ինչը թույլ կտա ՀՀ ծագում ունեցող բոլոր ապրանքատեսակները Եվրամիության անդամ երկրներ ներմուծել զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով:

2.11. Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտ

2006թ. նախարարության գործունեությունն ուղղված է եղել ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության, զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանն, ինչպես նաև ոլորտի պետական աջակցության ուղղությամբ ձեռնարկված համապատասխան միջոցառումների իրականացմանը: Արդյունքում, 2006թ., ըստ նախնական գնահատականների, ստեղծվել են ավելի քան 11.000 ՓՄՁ սուբյեկտներ, որի հաշվին ապահովվել է շուրջ 16.000 նոր աշխատատեղ: Նոր ՓՄՁ սուբյեկտների ստեղծման, ինչպես նաև գործող սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունքում նոր աշխատատեղերի թիվը կազմել է 20.500, որից 52.7%-ը՝ մարզերում, իսկ 47.3%-ը՝ Երևանում: Ըստ նախնական գնահատականների, ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է ավելի քան 40%, 2005թ. 39.8%-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ, ըստ նախնական գնահատականների, երկրի արտահանման ծավալում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը 2006թ. ավելացել է՝ կազմելով 17%, 2005թ. 16.4%-ի և 2004թ. 15.7%-ի դիմաց: ՓՄՁ զարգացման ինդեքսը 2006թ. կազմել է 237.2 (2005թ. 171.9, 2004թ. 117.8, 2003թ. 82)՝ 2002 թվականի (58.1) մակարդակը գերազանցելով ավելի քան 4 անգամ:

Իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության 2006թ. ծրագիրը, որի համար ՀՀ 2006թ. պետական բյուջեից հատկացվել է 350 մլն դրամ: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է շուրջ 110 մլն դրամ: Ընդ որում, սույն ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների ավելի քան

70%-ը նպատակաուղղվել է մարզերում գործարար ակտիվության բարձրացմանը: Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում, ըստ նախնական գնահատականների, օրենքով սահմանված ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել Երևանում և մարզերում գործող և սկսնակ 4684 ՓՄՁ սուբյեկտների, որից 1.7%-ը (80) գործում են Երևանում, իսկ 98.3%-ը (4604) մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Շարունակվել է «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՄԱԶԾ համատեղ իրականացվող ծրագիրը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի հետ համագործակցությունը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Միկրոձեռնարկությունների զարգացման նախաձեռնություն» ծրագրի հետ համագործակցությունը: Ճապոնիայի տեխնիկական համագործակցության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններում մարդկային ռեսուրսների զարգացման կենտրոնի» ստեղծման ուղղությամբ: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման դեպարտամենտի հետ համագործակցության շրջանակներում մշակվել է ՓՄՁ ոլորտի զարգացման տարածաշրջանային համատեղ ծրագիր, որը սկսվել է իրականացվել Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: ՓՄՁ ԶԱԿ-ի և Գերմանիայի տեխնիկական համագործակցության կազմակերպության «Սննդապահովման, տարածքային համագործակցության և Հարավային Կովկասում կայունության ծրագրի» միջև կնքված Համաձայնագրի շրջանակներում իրականացվել են միջոցառումներ՝ Տավուշի մարզում ՓՄՁ սուբյեկտների գործարար գիտելիքների մակարդակի բարձրացման և գործարար խորհրդատվական ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ:

2.12. Զբոսաշրջության ոլորտ

2006թ. 9 ամիսների տվյալներով ՀՀ են այցելել 272.5 հազար միջազգային զբոսաշրջիկներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 230.4 դիմաց, աճը՝ 18.3 %: 2006թ. տարեկան միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կհատի 380 հազարը: Ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 248 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 225 հազարի դիմաց, աճը՝ 10.2 %:

2006թ. հոկտեմբերին կազմակերպվել է ֆրանսիացի 170 զբոսաշրջային օպերատորների և լրագրողների ճանաչողական այց Հայաստան: Նոյեմբերին Ֆրանսիայում կազմակերպվել է Հայ-ֆրանսիական բիզնես-ֆորում: Նախարարի և Ֆրանսիայի զբոսաշրջության տրանսպորտի և աշխատանքի հարցերով նախարարի միջև

պայմանավորվածություն է ձեռք բերվել զբոսաշրջության բնագավառում հայ մասնագետների վերապատրաստման, փորձի փոխանակման, ՀՀ-ում ուսումնական հաստատության հիմնադրման, Ֆրանսիայում հայկական զբոսաշրջային արդյունքի խթանման ուղղություններով համագործակցության վերաբերյալ:

"Àýðîôëîò" ավիաընկերության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության արդյունքում “Ìèð Àýðîôëîòà” պարբերականում տպագրվել է Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող ծավալուն նյութ, իսկ ավիաընկերության չվերթներում տեղադրվել է “Öàxêàäçîð íà âñå âðåìåíà ãîäà” ամսագիրը: Ամսագիրը տարածվել է ՌԴ-ում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և այլ գործընկեր կազմակերպությունների միջոցով:

Հիմնադրվել է Երևանի զբոսաշրջության, սպասարկումների և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը: Քոլեջի դասախոսները և մասնավոր հատվածը ներկայացնող զբոսաշրջության բնագավառի մասնագետներ (թվով 11 հոգի) վերապատրասվել են Հունաստանում:

2006թ. Կիպրոսում վերապատրաստվել են զբոսաշրջության բնագավառի պետական և մասնավոր հատվածը ներկայացնող 7 մասնագետներ:

Հաշվետու տարում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2007թ. ընթացքում ՄԱԿ և ԶՀԿ հետ համատեղ օտարերկրյա հեղինակավոր լրատվամիջոցների Հայաստան ճանաչողական այցի կազմակերպման և Զբոսաշրջության համայնքային զարգացման ծրագրի մշակման ուղղությամբ: 2006թ. ոլորտի երկու մասնագետներ վերապատրաստվել են ՄԱԿ ԶՀԿ-ում և Միլանի Բոկկոնի համալսարանում:

2006թ. մարտին Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայում մասնակցել է ԱՊՀ երկրների զբոսաշրջության խորհրդի աշխատանքներին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել զբոսաշրջության բնագավառում կրթական համագործակցության ուղղությամբ:

Հայաստան-Սփյուռք երկրորդ տնտեսական համաժողովի շրջանակներում կայացել է «Զբոսաշրջություն» քննարկումների կլոր սեղան:

2006թ. ընթացքում որակավորվել են «Գոլդեն Փելես» (5 աստղ), «Մետրոպոլ» (4 աստղ), «Կոնգրես» (3 աստղ) հյուրանոցները: Գործընթացում է «Անի Պլազա Հոթել» հյուրանոցի որակավորումը: Շնորհվել են զբոսավարի 45 լիցենզիաներ:

Ի կատարումն ՀՀ Նախագահի մոտ տեղի ունեցած խորհրդակցության նախարարությունում զբոսաշրջային օպերատորների և ավիաընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի հիմնական նպատակն էր հատկապես Ծաղկաձորում ձմեռային սեզոնը ներգնա զբոսաշրջության համար աշխուժացնելը: Արդյունքում մի շարք ավիաընկերությունների կողմից հայկական

զբոսաշրջային օպերատորներին ձմեռային սեզոնի ընթացքում տրամադրվել են ավիափոխադրումների հատուկ սակագներ:

Հայաստանը մասնակցել է թվով 7 միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների. Vakantiebeurs (àõïñ»Ëï, ÐáÉ³Ý¹Ç³), BIT (ØÇÉ³Ý, Æï³ÉÇ³), ITB (´»éÉÇÝ, Գերմանիա), CTF (Թբիլիսի, Վրաստան), JATA (Տոկիո, Ճապոնիա), WTM (Լոնդոն, Մեծ Բրիտանիա): Հայաստանում կազմակերպվել է CTS - 2006 (Խոսող Քարերի Երկիր) ցուցահանդեսը:

«Ծաղկաձորը միջազգային չափանիշներրին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի շրջանակներում մեկնարկել է CNN հեռուստաալիքով Հայաստանը ներկայացնող երկու տեսահոլովակների հեռարձակումը: Գովազդարշավը կշարունակվի 2007թ. ընթացքում: Տպագրվել և տարածվել են բազմաթիվ գովազդատեղեկատվական նյութեր: Կազմակերպվել է ռուս և իսպանացի լրագրողների ճանաչողական այց Հայաստան:

2.13. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 2006թ. շարունակել է արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված՝ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման աշխատանքների կատարումը:

Ուշադրություն է դարձվել նաև ոլորտի իրավական կարգավորման կատարելագործմանը. ընդունվել են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին», «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Մշակվել և ստեղծվել է գերատեսչության նոր ինտերնետային կայքը, որտեղ տեղադրվել են իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանների և հանրահայտ ապրանքային նշանների հիմնապաշարները:

Գյուտեր և օգտակար մոդելներ: 2006թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 188 գյուտի և 21 օգտակար մոդելի հայտ, որոնցից 208-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ օտարերկրյա հայտատուից: 1992թ. սկսած գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը կազմել է 2564:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) Միջազգային բյուրո (ԺՆԿ) առաքվել է 7 միջազգային հայտ: Այսպիսով, ՀՀ-ից առաքված PCT հայտերի ընդհանուր քանակը կազմում է 46:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից ներկայացվել է գյուտի 2 հայտ: Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) առաքված հայտերի ընդհանուր քանակը կազմում է 11:

179 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն և որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 231 հայտերով, ընդ որում՝ 188 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին, 2 հայտով՝ հիմնական արտոնագիր տալու մասին, 23 հայտով՝ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին:

2006թ. տրվել է գյուտի 213 արտոնագիր և օգտակար մոդելի 27 արտոնագիր:

Ապրանքային նշաններ, ապրանքի ծագման տեղանուններ և արդյունաբերական նմուշներ: 2006թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1420 (որոնցից 934-ը՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտեր:

Ապրանքային նշանների 1400 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 50 հայտեր, 76 հայտերով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ: Գրանցվել են 1084 ապրանքային և սպասարկման նշաններ (որոնցից 725-ը՝ ազգային հայտատուների անունով):

Ապրանքի ծագման տեղանվան 3 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն և կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու 1 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1657 ծանուցում: Պահպանություն է տրամադրվել 1840 միջազգային ծանուցումներով ապրանքային նշանների: Նախնական մերժման մասին կայացվել են 450 որոշումներ, իսկ վերջնական մերժման մասին՝ 90: Միջազգային գրանցումներով մերժվել է 21 ապրանքային նշանի զիջում: Տրվել է ապրանքային նշանների 1084 գրանցման վկայագիր:

Ստացվել է արդյունաբերական նմուշի 26 հայտ (որոնցից 12-ը՝ ազգային հայտատուներից): Դրանցից 5-ով որոշում է կայացվել արտոնագիր տալու մասին: Տրվել է արդյունաբերական նմուշի 17 արտոնագիր:

Ֆիրմային անվանումներ: 2006թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3665 հայտ: Գրանցվել է ընդամենը 3498

անվանում, մերժվել է 167-ը£ “Ð³Û”, “Ð³Û³ëï³Ý”, “Ð³ÛÏ³Ï³Ý” µ³é»ñÇ ¨ դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 13 թույլտվություն:

<u>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</u>: 2006թ. լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համարներ՝ հայերեն և ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 213 գյուտի, 27 օգտակար մոդելի, 17 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1480 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների և 2349 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, 2004թ. գրանցված ֆիրմային անվանումների հայտերի, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (144 գրանցում):

Իրականացվել է 213 գյուտի և 27 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևի, ինչպես նաև 17 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Հրապարակվել է 2004-2005թթ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագիրը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և պատրաստվել են դրանց էլեկտրոնային ձևերը՝ ինտերնետային էջում տեղադրելու համար: Տարեկան հաշվետվություններն ուղարկվել են 26 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ: Հրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

ՄՄՀԿ ներկայացնելու համար պատրաստվել են 2005թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների վերաբերյալ:

Արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում պաշտոնական տեղեկագրերն ուղարկվել են 21 պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաև ՄՄՀԿ, Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) և Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են ՀՀ-ում արտոնագիր ստացած 213 գյուտի և 27 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է

ստանում ԱՄՆ, Ավստրիայի, Ֆրանսիայի, Կանադայի և Եվրոպական արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

Շարունակվել է ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը ՄՄՀԿ-ից, BREF և COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը Ֆրանսիայից:

Շարունակվել են գործակալության ավտոմատացման և տեխնիկական վերազինման աշխատանքները: Արդյունքում ստեղծվել են նոր ենթավարկածներ, որոնք են «Ապրանքային նշանների հիմնապաշարի» երրորդ, «Գյուտերի եւ օգտակար մոդելների» երկրորդ ենթավարկածը, «Ֆիրմային անվանումների» երկրորդ, «Ապրանքի ծագման տեղանունների», «Արդյունաբերական նմուշների» ենթավարկածները:

Իրականացվել է Symantec Backup Exec 10d ծրագրի տեղադրում և կարգաբերում, տվյալների արխիվացման ռազմավարության մշակում, Symantec AntiVirus Corporate Edition 10.1 ծրագրի տեղադրում և կարգաբերում:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2006թ. ընթացքում գրանցվել են 133 պայմանագրեր, որոնցից 103-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 21-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 7-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2-ը՝ արտոնագրային հասարակ լիցենզիա տալու մասին:

2006թ. 11 ամիսների ընթացքում Մտավոր սեփականության գործակալության կողմից իրականացվող գործողությունների համար պետական բյուջե մուտքագրվել է 429557,0 հազար դրամ, այդ թվում՝ գյուտերի և օգտակար մոդելների հայտերի հետ կապված՝ 3625, ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների հայտերի հետ կապված՝ 169224, ֆիրմային անվանումների գրանցումների հետ կապված՝ 24226, լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցման հետ կապված՝ 17254, պետական գրանցամատյանների վարման հետ կապված՝ 209673, բողոքների քննարկման հետ կապված՝ 5333, այլ գործողությունների հետ կապված՝ 222 հազար դրամ:

2.14. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման գործունեություն

Ոլորտում իրականացված աշխատանքներն ուղղված էին հիմնականում արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը նպաստելուն, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների անվտանգության ապահովման հարցերում սպառողների իրավունքների և պետության շահերի պաշտպանության ապահովմանը, արդյունաբերողներին և անհատ ձեռնարկատերերին, արտադրվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացման աջակցմանը, չափումների միասնականության ապահովմանը:

Ստանդարտացման բնագավառ: Մշակվել և ընդունվել են ՀՀ 29 ստանդարտներ, որոնք ամբողջովին ներդաշնակեցված են գործող միջազգային և եվրոպական ստանդարտներին (EN, ISO): Ուղղակի գործողության մեջ են դրվել 35 միջազգային ստանդարտներ: Ներկայումս ՀՀ-ում գործողության մեջ են դրված 220-ից ավելի միջազգային ստանդարտներ: Ընդունվել և գործողության մեջ են դրվել «Ստանդարտների դասակարգիչը», «Զբաղմունքների դասակարգիչը», «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը»:

ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 11 տեխնիկական կանոնակարգեր: Ներկայումս ՀՀ-ում ընդունված են 42 տեխնիկական կանոնակարգեր:

Ստանդարտացման Եվրոպական կոմիտեի (CEN) գլխավոր քարտուղարությունը հայտնել է իր համաձայնությունը Ստանդարտների ազգային ինստիտուտին (SARM) CEN-ի գործընկեր ստանդարտացման մարմին (PSB) ճանաչելու վերաբերյալ, որի պարագայում Ստանդարտացման մարմինը հնարավորություն կունենա կիրառելու Եվրոպական ստանդարտները որպես ազգային ստանդարտներ՝ նախկինում կիրառվող միջպետական ստանդարտների ՝ ԳOUS-երի փոխարեն, իրավունք կունենա մասնակցելու CEN-ի՝ CEN/TC 233 Բիոտեխնոլոգիայի, CEN/TC 234 Գազամատակարարման, CEN/TC 340 Հակասեյսմիկ սարքավորումների տեխնիկական կոմիտեների աշխատանքներին, առանց քվեարկության իրավունքի կմասնակցի գլխավոր Ասամբլեայի աշխատանքներին, կօգտվի CEN-ի տեղեկատվական ծառայություններից, կստանա CEN-ի հաստատվող տեքստերը, տեղեկատվական նյութեր և այլն:

Չափագիտության բնագավառ: Չափումների միասնականության ապահովման նպատակով իրականացվել է 600 չափման միջոցի տեսակի հաստատում, չափման միջոցների 495 պետական փորձարկում, տրվել է 1 չափման միջոցի արտադրության և նորոգման լիցենզիա: Փորձաքննության են ենթարկվել ՄՊԽ-ի կողմից ուղարկված չափագիտության բնագավառի 9 նորմատիվ փաստաթուղթ, ստուգաչափման և չափագիտական վկայագրման են ենթարկվել 270519 միավոր չափման միջոց:

Համապատասխանության գնահատման բնագավառ: Հավատարմագրվել են՝ արտադրանքի սերտիֆիկացման 14 մարմիններ, ծառայությունների սերտիֆիկացման 5 մարմիններ և որակի համակարգի ներդրման սերտիֆիկացման 1 մարմին: 2006թ. ընթացքում սերտիֆիկացման մարմինների կողմից մերժվել է 22 հայտ, այդ թվում՝ 13-ը անհամապատասխանության պատճառով:

Աշխատանքներ են տարվել ՀՀ-ում փորձարկման բազայի արդիականացման ուղղությամբ: Այդ նպատակով ձեռք է բերվել ժամանակակից շարժական նավթամթերքի փորձարկման լաբորատորիա, որը հնարավորություն տվեց օպերատիվ վերահսկել իրացվող ավտոմոբիլային բենզինի համապատասխանությունը տեխնիկական

կանոնակարգի պահանջներին: Վերջնական փուլում են գտնվում Ստանդարտների ազգային ինստիտուտի և Չափագիտության ազգային ինստիտուտի փորձարկման բազաների վերազինմանն ուղղված աշխատանքները:

2.15. Որակի վերահսկողություն

2006թ. Տեսչության կողմից ստուգումներ իրականացնելիս առաջնային նշանակություն է տրվել հացի և առաջին անհրաժեշտության այլ սննդամթերքի, դիզելային վառելիքի, բենզինի, ինչպես նաև լայն սպառման ապրանքների որակի վերահսկողությանը:

Տեսչության կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողություն է իրականացվել 2473 տնտեսավարող սուբյեկտներում, 466-ում հայտնաբերվել են 697 խախտումներ, այդ թվում՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջների՝ 583 և չափագիտական կանոնների ու նորմերի՝ 93: 21 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ խոչընդոտել են ստուգումների իրականացմանը: Պետական վերահսկողության արդյունքների հիման վրա 271 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին, 18 տնտեսավարող սուբյեկտներին՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը արգելելու մասին, 94 տնտեսվարող սուբյեկտներին՝ չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին:

Խախտումներ թույլ տված 457 պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 43.8 մլն դրամի չափով:

183 տնտեսվարող սուբյեկտներում իրականացվել են տրված կարգադրագրերի կատարման ստուգումներ, որոնց դրական արդյունքների հիման վրա տրվել են կարգադրագրեր արտադրանքի իրացումը և չափման միջոցների շահագործումը թույլատրելու մասին:

Ներքին այրման շարժիչային վառելիքների որակի ստուգումներ են իրականացվել 210 տնտեսավարող սուբյեկտների 228 ավտոլիցքավորման կայաններում և 5 նավթաբազաներում: Վերահսկողության արդյունքում 58 տնտեսավարող սուբյեկտներում հայտնաբերվել են տեխնիկական կանանակարգի պահանջների խախտումներ, կիրառվել են վարչական տուգանքներ 2.94 մլն դրամի չափով:

Ներքին այրման շարժիչային վառելիքների պետական չափագիտական վերահսկողություն է իրականացվել 56 տնտեսավարող սուբյեկտների 74 ավտոլիցքավորման կայաններում: Մեկ տնտեսավարող սուբյեկտի 2 ավտոլիցքավորման

կայաններում հայտնաբերվել են չափագիտական կանոնների և նորմերի խախտումներ: Վերահսկողության արդյունքների հիման վրա խախտում թույլ տված պատասխանատու անձի նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք 200 հազար դրամի չափով:

2.16. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն

Հաշվետու ժամանակաշրջանում «Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 3 որոշումներ, արձակվել նախարարի 4 հրամաններ: ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակված երկու տեխնիկական անվտանգության կանոնների նախագծեր, որից մեկն արդեն հաստատվել է:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ստեղծվել է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստր, որտեղ մինչև 2006թ սեպտեմբերի 1-ը պետք է գրանցվեին բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները: Ներկա պահին գրանցված են 2503 արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող կազմակերպություններ՝ մոտ 20000 արտադրական վտանգավոր օբյեկտներով: Տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրելու նպատակով նախարարի հրամանով ստեղծվել է հավատարմագրման հանձնաժողով:

«Պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտրի իրականացման» և «Պայթեցման աշխատանքների կատարում» գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների լիցենզավորման իրավական կարգավորման նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2 որոշումներ, հաստատման է ներկայացվել 1 որոշման նախագիծ: Ներկա դրությամբ ՀՀ-ում պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտրի իրականացմամբ և պայթեցման աշխատանքների կարարմամբ զբաղվում են 28 կազմակերպություն, որոնցից 4-ը 2006թ. լիցենզիա են ստացել: Վճարվել է 1,9 մլն դրամ պետական տուրք:

ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Վտանգավոր նյութեր արտադրող, օգտագործող և պահպանող այն կազմակերպությունների ցանկը, որոնք պարտավոր են ունենալ հնարավոր վթարի կանխարգելման և դրանց հետևանքների վերացման գործողությունների պլաններ» որոշման նախագիծը:

2.17. Ընդերքօգտագործման ոլորտ

2006թ. ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով տրամադրվել են հանքարդյունահանման 64 լիցենզիաներ: Չեղյալ է ճանաչվել 27 լիցենզիա: Փոփոխություններ են կատարվել է 9 լիցենզիաներում: Կատարվել է հանքարդյունահանման աշխատանքային 65 նախագծերի տեխնիկական և տեխնոլոգիական փորձաքննություն: Նախապատրաստվել է 71 լիցենզային պայմանագիր: Տրամադրվել է 62 լեռնահատկացում: Տնտեսվարող սուբյեկտներից ընդունվել և ուսումնասիրվել են բնօգտագործման վճարների 380 հաշվարկ-հաշվետվություններ, տրվել համապատասխան ցուցումներ: Մետաղային հանքավայրեր շահագործող 7 տնտեսվարող սուբյեկտներից ընդունվել և ուսումնասիրվել են ռոյալթիների հաշվարկ-հաշվետվություններ, տրվել համապատասխան ցուցումներ:

Ընդերքօգտագործողները պարբերաբար զգուշացվել են (220 ծանուցում) հանքային իրավունքներով ստանձնած պարտավորությունների ժամանակին չկատարելու համար:

Հավելված 1

Նախարարության համակարգի 2006թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին

Նախարարության համակարգի ընկերությունների կողմից արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացման ծավալը կազմել է 2885 մլն. դրամ՝ նախորդ տարվա 2429 մլն. դրամի համեմատ: Նախնական հաշվարկներով նախարարության համակարգի ընկերությունների շահույթը կազմել է 191 մլն. դրամ՝ նախորդ տարվա 137 մլն. դրամի համեմատ, վնասը կազմել է 91 մլն. դրամ՝ նախորդ տարվա 401 մլն դրամի համեմատ: Ընկերությունների կողմից բյուջե է փոխանցվել 323 մլն դրամ բոլոր հարկերի գծով, նախորդ տարվա 282 մլն դրամի համեմատ: Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մնացորդն առ 01.01.2006թ. կազմել է 211 մլն. դրամ, այդ թվում՝ տույժ-տուգանքերը 83 մլն. դրամ, իսկ 01.01.2007թ.՝ 203 մլն. դրամ, այդ թվում՝ տույժ-տուգանքերը 84 մլն. դրամ: 2006թ. ընթացքում տեղի է ունեցել նախորդ տարիների հարկային ապառքների մի մասի, ինչպես նաև տարվա ընթացքում հաշվարկված հարկային պարտավորությունների մարում:

01.01.2006թ. դրությամբ բյուջեի նկատմամբ պարտավորությունները, ըստ հարկատեսակների, նախնական հաշվարկներով (մլն. դրամ)

Ցուցանիշի անվանումը	01.01.2006թ.	01.01.2007թ.
Ավելացված արժեքի հարկ	82	78
Շահութահարկ	16	15
Եկամտահարկ	20	19
Գույքահարկ	2	1
Հողի հարկ	8	6
Տույժեր	83	84
Բնապահպանման վճարումներ	-	-
Այլ պարտադիր վճարներ	-	-
Ընդամենը	211	203

2006թ. սոցիալական ապահովագրության գծով ընկերությունների կողմից տարեկան վճարումը կազմել է 231 մլն դրամ, նախորդ տարվա 224 մլն դրամի համեմատ: Հաշվարկվել և վճարվել է շուրջ 999 մլն դրամ աշխատավարձ, նախորդ տարվա 929 մլն դրամի համեմատ:

2006թ. իրականացված պետ. բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը (հազ. դրամ)

Նախարարության աշխատակազմի պահպանման ծախսեր	**548 520,3**
Գիտատեխնիկական գրադարանին պետական աջակցություն	**103 330,0**
Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցություն	**350 000,0**
ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր	**34 930,0**
«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ	**15 408,6**
ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից	**195 287,0**
Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պետպատվեր	**35 000,0**
Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պետպատվեր	**50 703,0**
ՀՀ 2006թ. տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագիր	**64 042**
Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	
• *գիտության կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի շրջանակներում պետական աջակցություն*	**168 821,7**
• *ենթակառուցվածքների պահպանման և զարգացման շրջանակներում պետական աջակցություն*	**136 290,5**
Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	**20 112,0**
«Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագիր	**17 318,0**
Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն	**180 741,2**
Շվեյցարական կառավարության և «Թայգեր Դեվ Սուիսս» շվեյցարական ընկերության կողմից Ծաղկաձորի հեռանկարային ծրագրի մշակում	**25 460,8**
Ծաղկաձորում տուրիզմի զարգացման նպատակով Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքին սուբվենցիայի տրամադրում	**29 400,0**
Պետական տուրքի վճարման գծով ծախսեր	**481.7**

Հավելված 2

Նախարարության փաստաթղթաշրջանառությունը

ՀՀ կառավարության 2006թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախարարության մասով նախատեսված միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում:

Նախատեսված երեք գերակա խնդիրների միջոցառումների իրականացման ընթացքի մասին սահմանված ժամկետներում զեկուցվել է ՀՀ կառավարություն:

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 84 ՀՀ կառավարության որոշումներ, 4 օրենքներ , ՀՀ վարչապետի 15 որոշումներ:

2006թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ նախարարության աշխատակազմի քարտուղարությունում հաշվառվել է 7790 պաշտոնական գրություններ, նամակներ, 120 առաջարկություններ, քաղաքացիների դիմում-բողոքներ՝ որից 12 առաջարկություններ, 96 դիմումներ և 12 բողոքներ, հաշվառվել է նախարարի 255 հրաման: Մտից 7790 գրություններից 88-ը ստացվել են ՀՀ նախագահի աշխատակազմից, /որից 40-ը վերցվել են հսկողության/, 13-ը ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից /6-ը վերցվել են հսկողության /, 10-ը ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմից / 5-ը վերցվել են հսկողության /, 1250-ը՝ ՀՀ կառավարության աշխատակազմից, որից 350-ը ՀՀ կառավարության որոշումներ են /100-ը վերցվել են հսկողության /, 140-ը ՀՀ վարչապետի որոշումներ /15-ը վերցվել են հսկողության /, 760-ը ՀՀ կառավարության նիստերի արձանագրությունների քաղվածքներ, հանձնարարականներ /450-ը վերցվել են հսկողության /:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ ձեռնարկություններից, կազմակերպություններից ստացված 6429 նամակներից և գրություններից շուրջ 30 տոկոսի կատարումը վերցվել է հսկողության:

2006թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունից առաքվել են 2958 ելից գրություն, որից 1714-ը՝ նախարարի, 1244-ը՝ տեղակալների ստորագրությամբ:

ՑԱՆԿ

ՀՀ ԱՌԵՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆին
1.	«Չափագիտական աշխատանքների գծով 2007 թվականի պետական պատվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տարածքում չափումների միասնականության ապահովում, «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 30-րդ հոդվածների պահանջների կատարում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Մարտի 2-րդ տասնօրյակ	
2.	«Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի մշակման 2007 թվականի ծրագիրը և Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2007 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի պահանջների կատարում, ՀՀ-ում ստանդարտացման բնագավառի օրենսդրության բարելավում և ԱՀԿ պահանջների կատարում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Մարտի 2-րդ տասնօրյակ	
3.	««Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, մասնավորապես տեխնիկական կանոնակարգերի մասով, համապատասխանեցում միջազգային գործելակերպին և ԵՄ դիրեկտիվներին	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Ապրիլի 3-րդ տասնօրյակ	
4.	«Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների համապատասխանեցում միջազգային գործելակերպին և Եվրամիության դիրեկտիվներին	ՀՀ առև տրի և տնտեսական զարգացման նախարարություն	Ապրիլի 3-րդ տասնօրյակ	
5.	«Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին միջկառավարական Համաձայնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Համաձայնագրի ստորագրման շուրջ երկկողմ բանակցությունների ընթացքում ընդհանուր մոտեցման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Հունիսի 3-րդ տասնօրյակ	
6.	««Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Հուլիսի 1-ին տասնօրյակ	

7.	«ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Հուլիսի 2-րդ տասնօրյակ	
8.	«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ներդրումային և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների համակարգված իրականացում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	
9.	«Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
10.	«Վենչուրային գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ինովացիոն համակարգի ձևավորում	ՀՀ առևտրի և տնտ. զարգ. նախարարություն	Նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	
11.	«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՓՄՁ աջակցության ենթակառ. ամրապնդում, ՓՄՁ սուբյ. ֆին. և ներդրումային, նորարարական և արտ. տնտ., գործարար տեղեկատվ., խորհրդ. և ուսուցող. ծառայութ. օգտվելու, հնարավ. ընդլայնում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
12.	«Ներքին շուկայի պաշտպանության քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ներքին շուկայի պաշտպանության հիմնադրույթների ամրագրում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	
13.	«Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Արդյունաբերական սեփականության իրավական դաշտի բարելավում	ՀՀ առևտրի և տնտ. զարգ. նախ.	Դեկտեմբերի 1-ին տասնօր	
14.	«Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N1596-Ն որոշման համաձայն հավատարմագրման գործընթացի իրականացման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	Դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
15.	««Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Արտոնագրման գործընթացի բարելավում	ՀՀ առևտրի և տնտ.զարգ. նախարարություն	Դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	